ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

Հաշվետվություն

Հարգելի պարոն Մամիկոնյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2024 թվականի մայիսի 08-ից մինչև հունիսի 08-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- ✓ Համակարգչային ծրագրի միջոցով՝ պատահականության սկզբունքով, շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից ընտրել եմ համապատասխան լաբորատորիաները (թվով 81 ուղեկցող նամակ):
- ✓ Ուսումնասիրել եմ լաբորատորիաների կողմից տրամադրվող լաբորատոր փորձաքննությունների արձանագրությունների վերաբերյալ տեղեկատվությունը և այն մուտքագրել էլեկտրոնային բազա:
- ✓ Ուսումնասիրել եմ սահմանային պետական վերահսկողության բաժինների գործունեությանն առնչվող իրավական ակտերը:
- ✓ Ուսումնասիրել եմ Տեսչական մարմնի կողմից ներմուծվող սննդամթերքի փորձաքննություն կատարած կազմակերպությունների հետ կնքված փորձաքննության ծառայությունների մատուցման շրջանակային համաձայնագրերը, ինչպես նաև կազմակերպությունների կողմից մայիս ամսվա համար դուրս գրված հարկային հաշիվները և հանձնման-ընդունման արձանագրությունները:
- ✓ Լաբորատոր փորձաքննությունների համար վճարների մասով նախկինում գոյացած պարտավորությունների հիմքերի վերհանման նպատակով մասնակցել եմ 2019թ.-ի հարկային հաշիվների և հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությանը:
- ✓ Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացրել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10.06.2024թ.